ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՆ՝ ԺԱՄԸ 13:00-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ է.

1. Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 7-րդ մասով՝ 2020 թվականի հունիսի 22-ին՝ ժամը 13:00-ին գումարված Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի օրակարգում ընդգրկված հարցի քննարկումն անցկացնել հետևյալ հատուկ ընթացակարգով.

1) «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ» (Պ-667-19.06.2020-ՊԻ-010/0) նախագծի երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել առաջին ընթերցմամբ ընդունվելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում.

2) առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ» (Պ-667-19.06.2020-ՊԻ-010/0) նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկները, ինչպես նաև գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար սահմանել երեքական ժամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվական, հունիսի 22
Երևան
ԱԺՈ – 388 - Լ